Հավելված
Կապան համայնքի ղեկավարի
2025 թվականի մայիսի 15ի թիվ 559-Ա որոշման

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1, ԹԻՎ 2, ԹԻՎ 3, ԹԻՎ 5, ԹԻՎ 6, ԹԻՎ 8, ԹԻՎ 9, ԹԻՎ 10, ԹԻՎ 15 ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՎ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ՝ թիվ 1,թիվ 2, թիվ 3, թիվ 5, թիվ 6, թիվ 8, թիվ 9, թիվ 10 և թիվ 15 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների համար.

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ				
	անվանումը և համարը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	տեսակը (ավտոբուսային/ միկրոավ-տոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1.	Թիվ 1	Դավիթ Բեկ հրապարակ	Կավարտ թաղամաս	ավտոբուսային	2
2.	Թիվ 2	Մ.Հարությունյան փողոց	Գ.Նժդեհի հուշահամալիր	միկրոավտոբուսային	2
3.	Թիվ 3	Համայնքապետարանի հարակից այգի	Վաչագան թաղամաս	ավտոբուսային	1
4.	Թիվ 5	Սյունիք բնակավայրի կենտրոնական կանգառ	Բաղաբերդ թաղամաս	միկրոավտոբուսային	3
5.	Թիվ 6	Շահումյան հրապարակ	Բաղաբերդ թաղամասի վերջնամաս	ավտոբուսային	7
6.	Թիվ 8	Չարենցի փողոց	Շինարարների փողոց	ավտոբուսային	2
7.	Թիվ 9	Բաղաբերդ թաղ. թիվ 2 ՆՈՒՀ-ի հարակից տարածք	Կապանի ԼՀԿ վարչական շենք՝ Գործրանային	միկրոավտոբուսային	2

8.	Թիվ 10	Շինարարների թաղ. թիվ 2 շենքի հարակից տարածք	Սյունիք բնակավայրի կենտրոնական կանգառ	միկրոավտոբուսային	2
9.	Թիվ 15	Գ.Նժդեհի հուշահամալիր	Բաղաբերդ թաղամաս	միկրոավտոբուսային	2

ՑԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ա որոշման N2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.*Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր,գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:

Մրցույթի անցկացման օրը՝ 2025 թվականի հուլիսի 01-ին ժամը՝ 11:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 2/2 սենյակ:

Փաթեթների բացման օրը՝ 2025 թվականի հունիսի 25-ին, ժամը 11:00-ին՝ ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 2/2 սենյակ:

Հայտերն ընդունվում են ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 5/17 սենյակում, ամեն օր՝ ժամը 9 :00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է՝ 2025 թվականի հունիսի 24-ը ժամը 17:00-ն:

Մրցույթն անց է կացվում Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ա որոշման պահանջներին համապատասխան:

Շվացուցակներին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումներով՝

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1030

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1031

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1032

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1033

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1034
https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1035
https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=940

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=939

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=938

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ +374 060 720072 և 060 720074 հեռախոսահամարներով:

Մրցութային հանձնաժողովի նախագահ *Գոռ Թադևոսյան*